Բրբանկի Միացյալ Դպրոցական Դիսթրիկթի Խորհրդի Հաստատած Կանոնները

Բուլիինգ. BP 5131.2 Աշակերտներ

Սահմանում

Բուլիինգը բռնության տեսակ է: Գործողություն, որի ժամանակ ավելի զորեղ աշակերտը, անձը կամ խումբը ավելի թույլի նկատմամբ կիրառում է իրական կամ ենթադրվող անհավասար ուժ:

Բուլիինգը անձին բռնության ենթարկելու գործողությունն է: Սովորաբար այդ կարգի վարքը լինում է ոչ հրահրված, դիտավորյալ, ժամանակի ընթացքում կրկնվող, ներառում է վիրավորական բառեր կամ գործողություններ:

Բուլիինգը ներառում է (բայց չի սահմանափակվում) ժեստեր կամ գրավոր, բանավոր կամ ֆիզիկական գործողություններ, որոնք տրամաբանորեն համարվում են ընդհանուր անհարգալից վերաբերմունքով և իրական կամ ենթադրվող հատկանիշներով պատճառաբանված, ինչպես օրինակ՝ ցեղը, ազգային պատկանելիությունը, մաշկի գույնը, կրոնը, նախնիները, գենդերը, գենդերային ինքնությունը կամ արտահայտությունը, սեռական կողմնորոշումը, մտավոր, ֆիզիկական կամ զգացական անկարողությունը, կամ իրականացվում է այն անձանց նկատմամբ, որոնք առնչվում են պաշտպանված խմբերից որևէ մեկին. կատարվում են դպրոցի տարածքում կամ դպրոցի հովհանավորությամբ իրականացվող գործառույթներում, դպրոցի ավտոբուսում, կամ (1) աշակերտի կամ դպրոցի աշխատակցի մոտ ողջամտորեն առաջացնում են վախ իրենց անձի ու առողջության կամ գույքը վնասելու համար կամ (2) կարող են անդրադառնալ աշակերտի ուսման, կրթական հնարավորությունների ու ձեռքբերումների վրա կամ (3) ազդում են դպրոցի բնականոն ընթացքի վրա:

Բուլիինգի հնարավոր ցուցիչները

1. Բուլիինգը կարող է տեղի ունենալ դեմ առ դեմ կամ գրավոր, հեռախոսային, առցանց հաղորդակցության ժամանակ: Բուլիինգը սովորաբար լինում է կրկնվող և ներառում է (բայց չի սահմանայակվում) հետևյալը.
2. Բանավոր: Վիրավորական անուններով կանչելը, ծաղրելը, բամբասելը, պախարակելը, սպառնալը, կոպիտ ձայներ հանելը կամ վիրավորական տեղեկություններ տարածելը:
3. Ֆիզիկական: Հարվածելը, բռնցքահարելը, հրելը, բոթելը, աքացի տալը, սայթաքելուն մղելը, կոկորդը սեղմելը, մազերը քաշելը, կռվելը, ծեծելը, թքելը, գողանալը կամ իրերը փչացնելը:
4. Զգացական (Հոգեբանական): Մերժելը, վախեցնելը, շահագործելը, զրպարտելը, ահաբեկելը, նվաստացնելը, շանտաժի ենթարկելը, ընկերությունը չարաշահելը, մեկուսացնելը, ճնշելը և անձնական հատկանիշները պիտակավորելը:
5. Համացանցային (Կիբեռբուլիինգ,Cyber Bullying): Ներառում է ինտեռնետի և այլ սոցիալական ցանցերի, հեռախոսի, համակարգչի, այլ տեխնոլոգիաների ու սարքերի

միջոցով սպառնալի վիրավորական հաղորդակցություն ուղարկելը, անմիջական սպառնալիքը կամ այլ վնասող տեքստեր, ձայներ ու պատկերներ ուղարկելը: Համացանցային բուլիինգ է համարվում նաև վարկաբեկելու նպատակով այլ անձի անձնական էլեկտրոնային հաշվեհամարը կոտրելը և այդ անձի անունից հանդես գալը:

6. Ցանկացած գործողություն, որի արդյունքում անձը կամ մարկանց խումբը վիրավորանք է ստանում կամ ստորացվում է այնպիսի միջոցներով, որոնք պատճառում են անհանգստություն, դպրոցից խուսափում, աշխատանքի որակի անկում կամ վարքի խնդիրներ:

Կրթական Խորհուրդը հավարտարիմ է ապահով աշխատանքային և ուսումնական միջավայր ստեղծելուն: Դիսթրիկթը չի հանդուրժի որևէ բուլիինգ կամ գործողություն, որը կխաթարի աշակերտների, աշխատակազմի կամ դիսթրիկթի իրավասության տակ գտնվող այլ անձանց ապահովությունն ու բարօրությունը: Դիսթրիկթը չի հանդուրժի որևէ վրեժխնդրություն բուլիինգի դեպքում: Դիսթրիկթի կանոնակարգը պահանջում է դպրոցներից ու աշխատողներից բարձրացնել աշակերտների և աշխատակազմի շրջանում փոխադարձ հարգանքն ու հանդուրժողականությունը: «Հանրային բոլոր նախակրթարանների, տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտներն ու աշխատակիցները անբեկանելի իրավունք ունեն հաճախելու դպրոցներ, որոնք ապահով են և խաղաղ» (Article 1, Section 28 (c), California State Constitution):

Բուլիինգի վերաբերյալ զեկուցում ստանալու երկու օրերի ընթացքում տնօրենը պետք է տեղեկացնի դիսթրիկթի՝ բողոքներով զբաղվող պաշտոնյային կամ իր նշանակած անձին՝ ըստ Բողոքների Միասնական Ընթացակարգի (AR 1312.3 - Uniform Complaint Procedures):

(cf. 1312.3 - Uniform Complaint Procedures (Բողոքների Միասնական Ընթացակարգ))

Խորհուրդը ձգտում է բարելավել աշակերտների կրթությունը՝ տրամադրելով կանոնավոր, հոգատար, դաստիարակող կրթական, սոցիալական միջավայր, որտեղ բոլոր աշակերտները կարող են իրենց ապահով զգալ և հպարտանալ իրենց դպրոցով ու ձեռքբերումներով: Այս առումով Խորհուրդը նաև ընդունում է բուլիինգի վնասակար ազդեցությունը աշակերտների սովորելու, հաճախումների վրա և ցանկանում է պաշտպանել աշակերտներին ֆիզիկական և հոգեբանական վնասներից: Յուրաքանչյուր դպրոցում միջավայրը պետք է բնորոշվի աշակերտների, աշխատակիցների և համայնքի անդամների միջև դրական միջանձնային հարաբերություններով:

(cf. 0410 - Nondiscrimination in District Programs and Activities (Ոչ Խտրականություն Դիսթրիկթի Ծրագրերում ու Գործողություններում))

(cf. 3515 - Campus Security (Դպրոցի Շենքի Անվտանգություն))

(cf. 3515.2 – Disruptions (Խաթարում))

(cf. 5030 - Student Wellness (Աշակերտների Բարօրություն))

(cf. 5131 – Conduct (Վարք))

(cf. 5131.4 - Student Disturbances (Աշակերտների Անհանգստացում))

(cf. 5142 – Safety (Ապահովություն))

(cf. 5145.3 - Nondiscrimination/Harassment (Ոչ Խտրական Վերաբերմունք / Ոտնձգություն)

Ոչ մի անհատ, աշակերտ կամ աշակերտների խումբ չպետք է ֆիզիկական, գրավոր, բանավոր կամ այլ միջոցներով ոտնձգություն կատարի, սեռական ոտնձգության ենթարկի, սպառնա, վախեցնի, համացանցային բուլիինգի ենթարկի, ֆիզիկական վնաս հասցնի կամ ատելության հողի վրա բռնություն կատարի որևէ այլ աշակերտի կամ դպրոցի աշակատակցի նկատմամբ:

(cf. 5131 – Conduct (Վարք))

(cf. 5136 – Gangs (Գենգեր))

(cf. 5145.3 - Nondiscrimination/Harassment (Ոչ Խտրական Վերաբերմունք /Ոտնձգություն))

(cf. 5145.7 - Sexual Harassment (Սեռական Ոտնձգություն))

(cf. 5145.9 - Hate-Motivated Behavior (Ատելությամբ Պայմանավորված Վարքագիծ))

Բուլիինգը կանխելու կամ դրանց միջամտելու ռազմավարությունները պետք է կազմվեն գլխավոր շահագրգիռ կողների մասնակցությամբ՝ համաձայն օրենքի, Խորհրդի Կանոնների և զարգացումն ու համապարփակ անվտանգության ծրագերը կառավարող վարչական կանոնակարգի և դրանք պետք է ներառվեն այսօրինակ ծրագրերի մեջ:

(cf. 0420 - School Plans/Site Councils (Դպրոցական Ծրագրեր / Դպրոցի Խորհուրդ))

(cf. 0450 - Comprehensive Safety Plan (Համապարփակ Անվտանգության Ծրագիր))

(cf. 1220 - Citizen Advisory Committees (Քաղաքացիների Խորհրդատվության Կոմիտե))

(cf. 1400 - Relations Between Other Governmental Agencies and the Schools (Պետական Այլ Գործակալությունների և Դպրոցների Հետ Հարաբերություններ))

(cf. 6020 - Parent Involvement (Ծնողների Ներգրավում))

Բուլիինգի կանխում

Դիսթրիկթի և դպրոցների ռազմավարությունները հնարավորինս պետք է կենտրոնանան բուլիինգը կանխելու վրա՝ ստեղծելով հստակ կանոններ աշակերտների վարքի վերաբերյալ և ռազմավարություններ դրական, համագործակցային դպրոցական մթնոլորտի համար: Աշակերտները, ծնողները և աշխատակիցները պետք է տեղեկացված լինեն բուլիինգի, միջադեպերը կամ սպառնալիքները հայտնելու մեխանիզմների, բուլիինգ կատարած մարդկանց համար հետևանքների մասին դպրոցական տեղեկագրի և այլ համապատասխան միջոցներով:

(cf. 5137 - Positive School Climate (Դպրոցական Դրական Մթնոլորտ))

(cf. 6164.2 - Guidance/Counseling Services (Առաջնորդում / Խորհրդատվական Ծառայություններ))

Դիսթրիկթը աշակերտներին կարող է տրամադրել դասավանդում դասարանում կամ կրթական այլ միջավայրում, որը խթանում է արդյունավետ հաղորդակցություն և ընդհարումները հարթելու հմտություններ, սոցիալական շփման հմտություններ, արժեքների կրթություն, հարգանք մշակութային և անհատական տարբերությունների նկատմամբ, ինքնագնահատականի զարգացում, հաստատականության հմտություններ և ընդունելի վարք համացանցում:

(cf. 6163.4 - Student Use of Technology (Աշակերտների՝ Տեխնոլոգիաների Օգտագործում))

(cf. 6142.8 - Comprehensive Health Education (Համապարփակ Առողջապահական Կրթություն))

(cf. 6142.94 - History-Social Science Instruction (Պատմության և Հասարակական Գիտությունների Ուսուցում))

Դպրոցի աշխատակազմը պետք է ստանա համապատասխան մասնագիտական կատարելագործում՝ ներառյալ ոտնձգություններ / սպառնալիքներ կանխանշող հատկանիշների մասին և կանխարգելման ու միջամտության արդյունավետ ռամավարությունների մասին տեղեկություններ:

(cf. 4131 - Staff Development (Աշխատակազմի Կատարելագործում))

(cf. 4231 - Staff Development (Աշխատակազմի Կատարելագործում))

(cf. 4331 - Staff Development (Աշխատակազմի Կատարելագործում))

Հիմնվելով դպրոցներում բուլիինգի գնահատման վրա՝ Գլխավոր Տեսուչը կամ պատասխանատու պաշտոնյան կարող է ուժեղացնել հսկողությունը և անվտանգությունը այն տարածքներում, որտեղ բուլիինգը ավելի հաճախ է տեղի ունենում, ինպես օրինակ՝ դասարաններում, խաղահրապարակներում, միջանցքներում, զուգարաններում ու ճաշարաններում:

Միջամտում

Աշակերտները խրախուսվում են տեղեկացնել դպրոցի աշխատակազմին, եթե իրենք ենթարկվում են բուլիինգի կամ եթե կասկածում են, որ մեկ այլ աշակերտ բուլիինգի զոհ է դառնում: Ավելին, Գլխավոր Տեսուչը կամ պատասխանատու պաշտոնյան պետք է աշակերտների համար մշակեն միջոցներ, որպեսզի վերջիններս կարողանան տեղեկացնել բուլիինգի միջադեպերի մասին՝ պահպանելով իրենց անձի գաղտնիությունը: Ստեղծվել են հեռախոսային թեժ գիծ (818- 729-4589), էլ. հասցե և պորտալ (StopBullying@burbankusd.org)՝ բուլիինգի մասին անանուն հաղորդագրություններ անելու համար: Այս տեղեկությունները կհրապարակվեն դիսթրիկթի կայքէջում և յուրաքանչյուր դպրոցում:

Դպրոցի աշխատակիցները բուլիինգի ականատես լինելու դեպքում պետք է անմիջապես միջամտեն՝ դրան վերջ տալու համար, եթե դա անելը ապահով է: (Կրթական Կոդ (Education Code 48900.9234.1))

Կախված բուլիինգի ծանրությունից ու տարածվածությունից, դպրոցի Գլխավոր Տեսուչը կամ պատասխանատու պաշտոնյան պետք է պատեհ ժամանակ հայտնեն դրա միասին տուժողի և կատարողի ծնողներին / խնամակալներին, հնարավոր է նաև՝ իրավապահ մարմիններին:

Գլխավոր Տեսուչը, տնօրենը, կամ տնօրենի նշանակած անձը կարող են տուժողին, վկային, բուլլինգը իրականացնողին կամ բուլիինգից ազդված այլ աշակերտների ուղարկել դպրոցի խորհրդականի, հոգեբանի, սոցիալական աշխատողի կամ աշակերտների բարեկեցության, հաճախումներով զբաղվող աշխատակցի, դպրոցի բուժակի և այլ ծառայությունների աշխատակիցների մոտ՝ գործի կառավարման (case management), խորհրդատվության և/կամ վերականգնողական արդարադատության ծրագրերին մասնակցելու համար ((Կրթական Կոդ (Education Code 48900.9)):

(cf. 6164.2 - Guidance/Counseling Services (Առաջնորդում / Խորհրդատվական Ծառայություններ))

Բողոքների մասին զեկուցելը

Աշակերտները ուսուցչին կամ վարչական աշխատողին գրավոր կամ բանավոր կարող են զեկուցել այն վարքի մասին, որը իրենք համարում են բուլիինգ: Բողոքները պետք է հետաքննվեն և լուծվեն համապատասխան Բողոքների Միասնական Ընթացակարգի (AR 1312.3 - Uniform Complaint Procedures):

(cf. 1312.3 - Uniform Complaint Procedures (Բողոքների Միասնական Ընթացակարգ))

Եթե աշակերտը հայտնում է դպրոցից դուրս կատարված բուլիինգի մասին, ապա Գլխավոր Տեսուչը պետք է հետաքննի և արձանագրի գործողությունները և պետք է մատնանշի հատուկ իրավիճակը կամ փաստերը, որոնք բացատրում են դպրոցական գործունեության,

հաճախումների կամ թիրախ հանդիսացող աշակերտի կրթական արդյունքների վրա իրական կամ հնարավոր ազդեցությունը:

Ցանկացած աշակերտ, ծնող /խնամակալ կամ այլ անձ ով հավատացած է, որ աշակերտը ենթարկվել է բուլիինգի կամ եթե ականտես է եղել բուլիինգի, կարող է այդ մասին հայտնել ուսուցչին, տնօրենին, բողոքներով զբաղվող պաշտոնյային կամ դպրոցի ցանկացած այլ պաշտոնյայի: Այսպիսի հաղորդում ստանալուց հետ մեկ օրվա ընթացքում պետք է հայտնի տնօրենին, անկախ այն համգամանքից՝ միասնական բողոքի արձանագրություն կատարվե՞լ է, թե՞՝ ոչ: Ավելին, դպրոցի ցանկացած աշխատակից, ով քննել է աշակերտի մասնակցությամբ բուլիինգը, պետք է մեկ աշխատանքային օրվա ըմթացքում իր դիտարկումները ներկայացնի տնօրենին կամ բողոքներով զբաղվող պաշտոնյային՝ անկախ այն հանգամանքից տուժողն այդ մասին բողոք ներկայացրե՞լ է, թէ՞՝ ոչ:

Եթե իրադրությունը ներառում է համացանցային բուլիինգ, այդ մասին տեղյակ անձը խրախուսվում է պահել, տպել ցանկացած թվային կամ էլեկտրոնային հաղորդագրություն, որն ուղարկվել է իրենց և որոնք իրենք համարում են համացանցային բուլիինգ և այդ մասին հայտնել ուսուցչին, տնօրենին, բողոքներով զբաղվող պաշտոնյային կամ դպրոցի ցանկացած այլ պաշտոնյայի, որպեսզի դեպքը հետաքննվի:

Եթե աշակերտը օգտագործում է համացանցային էջ կամ ծառայություն, որն ունի վնասակար նյութեր տեղադրելն արգելող պայմաններ, Գլխավոր Տեսուչը կամ պատասխանատու պաշտոնյան կարնող են նաև բողոք ուղարկել այդ կայքէջին կամ ծառայությանը՝ պահանջելով նյութը հեռացնել էջից:

Կարգապահություն

Ցանկացած աշակերտ, ով մասնակցում է բուլիինգին դպրոցում կամ դրա տարածքից դուրս և որի արդյունքում հնարավոր է, որ խանգարի դպրոցի բնականոն գործունեությունը կամ դպրոց հաճախումները, կենթարկվի կարգապահական գործողության, որը կարող է ներառել դասերի կասեցում կամ վտարում՝ համաձայն դիսթրիկթի քաղաքականության ու կանոնակարգի:

Ցանկացած աշխատակից, ով մասնակցում կամ թույլ է տալիս բուլիինգ կամ դրա հետ կապված վրեժխնդրություն, պետք է ենթարկվի կարգապահական գործողության՝ ընդհուպ մինչև աշատանքից ազատման՝ համաձայն կիրառելի հավաքական բանակցելի պայմանավորվածության և Խորհրդի Կանոնների:

(cf. 5138 - Conflict Resolution/Peer Mediation (Հակասության Լուծում / Ընկերների Միջամտություն)

(cf. 5144 – Discipline (Կարգապահություն)

(cf. 5144.1 - Suspension and Expulsion/Due Process (Կասեցում և Վտարում / Վերջնաժամկետի Ընթացակարգ)

(cf. 5144.2 - Suspension and Expulsion/Due Process (Students with Disabilities) ((Կասեցում և Վտարում / Վերջնաժամկետի Ընթացակարգ (Անկարողություններ Ունեցող Աշակերտներ))

(cf. 6159.4 - Behavioral Interventions for Special Education Students (Վարքի Միջամտում Հատուկ Կրթության Աշակերտների Համար)

Իրավական հղումներ

ԿՐԹԱԿԱՆ ԿՈԴ (EDUCATION CODE)

200-262.4 Խտրականության արգելում (Prohibition of discrimination)

32282 Համապարփակ անվտանգության ծրագիր (Comprehensive safety plan)

35181 Աշակերտների պարտականությունների՝ Կրթական Խորհրդի կանոններ (Board of Education policy on responsibilities of students)

35291-35291.5 Կանոններ (Rules)

48900-48925 Կասեցում և վտարում (Suspension or expulsion)

48985 Ծանուցումների թարգմանություն (Translation of notices)

ՏՈՒԳԱՆՔԻ ԿՈԴ (PENAL CODE)

647 Այլ մարդկանց անձնական կյանք ներխուժելու նպատակով տեսախցիկի կամ այլ սարքերի օգտագործում՝ չարաշահում (misdemeanor)

647.7 Այլ մարդկանց անձնական կյանք ներխուժելու նպատակով տեսախցիկի կամ այլ սարքերի օգտագորղում՝ պատիժ

653.2 էլեկտրոնային հաղորդակցության սարքեր՝ սպառնալիք անվտանգությանը

ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ԿՈԴ, ԽՈՐԱԳԻՐ 47 (UNITED STATES CODE, TITLE 47)

254 Համընդհանուր ծառայությունների զեղչ (e-rate)

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Ջեյ Սին (J.C.) ընդդեմ Բեվերլի Հիլլսի Միացյալ Դպրոցական Դիսթրիկթի, (2010) 711 F.Supp.2d 1094

Լեյվինն ընդդեմ Բլեյնի Դպրոցական Դիսթրիկթի, (2002) 279 F.3d 719

Կառավարման միջոցներ

CSBA-ի ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անդրադառնալով Երեխաների Պայմաններին. Կենտրոնացում Բուլիինգի Վրա, Կառավարման Ամփոփագիր (Addressing the Conditions of Children: Focus on Bullying, Governance Brief), Դեկտեմբեր 2012

Ապահով Դպրոցներ: Աշակերտների Հաջողություններն Ապահովելու Ռազմավարություն Կրթական Խորհրդի Համար (Safe Schools: Strategies for Board of Educations to Ensure Student Success), 2011

Ապահով, Ոչ Խտրական Դպրոցական Միջավայրի Ստեղծում, Ծրագրային Ամփոփագիր (Providing a Safe, Nondiscriminatory School Environment for All Students, Policy Brief), Ապրիլ 2010

Կիբերբուլիինգ, Ծրագրային Նկատառումներ Խորհուրդների Համար, Ծրագրային Ամփոփագիր (Cyberbullying: Policy Considerations for Boards, Policy Brief), Հուլիս 2007

Վերջնական Ուղեցույց: AB 1266, Տրանսգենդեր և Գենդերային Անհամապատասխանություն Ունեցող Աշակերտներ. Գաղտնիության, Ծրագրերի, Գործողությունների ու Կառույցների Իրավական Ուղեցույց (Final Guidance: AB 1266, Transgender and Gender Nonconforming Students, Privacy, Programs, Activities & Facilities, Legal Guidance), Մարտ 2014

Ապահով, Ոչ Խտրական Դպրոցական Միջավայրի Ստեղծում Տրանսգենդեր և Գենդերային Անհամապատասխանություն Ունեցող Աշակերտներ Համար, Ծրագրային Ամփոփագիր (Providing a Safe, Nondiscriminatory School Environment for Transgender and Gender-Nonconforming Students, Policy Brief), Փետրվար 2014

Առողջ Համայնքների Ստեղծում: Համագործակցության Եվ Համայնքի Ներգրավման Ուղեցույց Դպրոցի Ղեկավարների Համար (Building Healthy Communities: A School Leaders Guide to Collaboration and Community Engagement), 2009

ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Առողջապահական Կրթության Բովանդակության Ստանդարտներ Կալիֆորնիայի Համայնքային Դպրոցների Համար, Մանկապարտեզից մինչև 12-րդ դասարան (Health Education Content Standards for California Public Schools: Kindergarten Through Grade Twelve), 2008

Բուլիինգը Դպրոցում (Bullying at School), 2003

ԱՄՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Նամակ, Սիրելի Գործընկեր: Ոտնձգություն և Բուլիինգ (Dear Colleague Letter: Harassment and Bullying), Հոկտեմբեր 2010

Նամակ, Սիրելի Գործընկեր: Անկարողություններ ունեցող աշակերտների Բուլիինգ (Dear Colleague Letter: Bullying of Students with Disabilities), Օգոստոս 2013

Նամակ, Սիրելի Գործընկեր: Ոտնձգություն և Բուլիինգ (Dear Colleague Letter: Harassment and Bullying) Հոկտեմբեր 2010

ԿԱՅՔԷՋԵՐ

CSBA: http://www.csba.org

Կալիֆորնիայի Կիբեռապահովություն Երեխաների Համար (California Cybersafety for Children): http://www.cybersafety.ca.gov

Կալիֆորնիայի Կրթույթան Բաժին, Ապահով Դպրոցների Գրասենյակ (California Department of Education, Safe Schools Office): http://www.cde.ca.gov/ls/ss

Համացանցի Ապահով և Պատասխանատու Օգտագործման Կենտրոն (Center for Safe and Responsible Internet Use): http://cyberbully.org

Դպրոցական Խորհուրդների Ազգային Միություն (National School Boards Association): http://www.nsba.org

Դպրոցական Անվտանգության Ազգային Կենտրոն (National School Safety Center): http://www.schoolsafety.us

ԱՄՆ Կրթության Նախարարություն, Քաղաքացիական Իրավունքի Գրասենյակ (U.S. Department of Education, Office for Civil Rights): http://www.ed.gov/about/offices/list/ocr

Քամընն Սենս Մեդիա (Common Sense Media): http://www.commonsensemedia.org

Օն Դը Լայն (ON[the]LINE), քաղաքացիության թվային աղբյուրներ: http://www.onthelineca.org

ԱՄՆ Կրթության Նախարարություն (U.S. Department of Education): http://www.ed.gov

Ծրագիր, Բրբանկի Միացյալ Դպրոցական Դիսթրիկթ

ընդունվել է՝ 7-ը մարտի, 2013թ., Բրբանկ, Կալիֆորնիա

վերանյվել է՝ 1-ը մայիսի, 2014թ.

վերանյվել է՝ 15-ը հոկտեմբերի, 2014թ.

վերանյվել է՝ 17-ը մարտի, 2016թ.